Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցի գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 240-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի՝ տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունների կատարում /մարում/ է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված վճարման ենթակահարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և /կամ/ տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ տեղական բյուջեի գանձապետական հաշվին:
Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի՝ կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները իրենց պետական գրանցման /հաշվառման/ վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հարկային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ***

1. Ազարոն Ակոպյանից հօգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել ընդամենը 513438/հինգ հարյուր տասներեք հազար չորս հարյուր երեսունութ/ՀՀ դրամ որպես INFINITI FX 35 3,5 մակնիշի 15 SN 777 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գումար, ներառյալ տույժերը:
2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:
4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՆՈՍՅԱՆ

20<u>22</u>թ. <u>հունվարի 06</u>
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 776-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Լևոն Աշոտի Բալաբեկյանը (անձնագիր՝ AT0326096, ՀԾՀ՝ 2001810547 հաշվառված ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, գ. Լանջաղբյուր, Հակոբ Հակոբյան 3) հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2022 թվականի սեպտեմբերի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ,,բ'' ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարների գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի կողմից տրամադրված ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող՝ Գավառ համայնքի 05-038-0016-0003, 05-038-0202-0225, 05-038-0206-0081, 05-038-0122-0018, 05-038-0103-0089, 103-004, 122-019 կադաստրային ծածկագրով հողատեսքերը հանդիսանում են Լևոն Աշոտի Բալաբեկյանի սեփականությունը:
Անշարժ գույքերի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 73411/յոթանասուներեք հազար չորս հարյուր տասնմեկ/ՀՀ դրամ, ինչը 2008-2021թթ. ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Լևոն Աշոտի Բալաբեկյանի կողմից նշված ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 40949/քառասուն հազար ինն հարյուր քառասունինը/ ՀՀ դրամի չափով:
2022 թվականի սեպտեմբերի 20-ին «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ,,բ'' կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի հոկտեմբերի 6-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 20.09.2022թ. ծանուցում azdarar.am կայքում/ Լևոն Աշոտի Բալաբեկյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:
06.10.2022թ. վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Լևոն Աշոտի Բալաբեկյանի բացակայությամբ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:
Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:
Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի տարեկան գումարները /այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները / անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:
Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի՝ տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունների կատարում /մարում/ է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված վճարման ենթակահարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և /կամ/ տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝տեղական բյուջեի գանձապետական հաշվին: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով:
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը, ինչպես նաև տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ հարկային օրենսգրքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, *որոշում եմ*

1. Լևոն Աշոտի Բալաբեկյանից հօգուտ Գավառ համայնքի բյուջե գանձել ընդամենը 114 360/մեկ հարյուր տասնչորս հազար երեք հարյուր վաթսուն/ՀՀ դրամ, որպես 05-038-0016-0003, 05-038-0202-0225, 05-038-0206-0081, 05-038-0122-0018, 05-038-0103-0089, 103-004, 122-019 կադաստրային ծածկագրերով գույքերի գույքահարկերի գումար, ներառյալ տույժերը:
2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց եռամսյա ժամկետում:
4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 05
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 777-Ա

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-23/, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-24/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-25/, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 2.3-5 / ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասսին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարի 29.08.2006թ. թիվ 12-Ն որոշմամբ հաստատված «Համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի» 8.1-րդ կետը, ***որոշում եմ***

1. Հաստատել Գավառի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-23/, աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-24/, աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-25, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-/ թափուր պաշտոնների համար 2022 թվականի հոկտեմբերի 10-ին հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմը՝ հետևյալ անդամներով.

1. Խաժակ Երջանիկի Սուչյան /ՀԳՄՏԱԳՀ բաժնի պետ/
2. Վարդուհի Խաչիկի Վարպետյան /ՏԻ և ՀԾՀ բաժնի մասնագետ/
3. Ռուբեն Հայկի Կոխպեցյան /Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ/
4. Գրիգոր Ռազմիկի Բոշյան /Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ/
5. Վարազդատ Կորյունի Ավետիսյան /Գիտական հաստատության ներկայացուցիչ/
6. Նունե Արամայիսի Միրիբյան /Գավառ համայնքի ավագանու անդամ/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022 թ. հոկտեմբերի 10
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 778-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԲԵԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12-ՐԴ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ՀԱՐԱՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, 18.05.2006 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն, 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցների հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիրը 2022Z5KH4Q; մուտքագրված 14.09.2022թ, հիմք ընդունելով Գավառ համայնք Կբելագործների փողոց շ. 59 բն. 2 հասցեի բնակիչ Անահիտ Հենրիկի Սաղաթելյանի /ծնված 09.05.1958թ./ դիմումը՝ Գավառ համայնք Կաբելագործներ փողոց թիվ 12 բազմաբնակարան բնակելի շենքից հարավ ընկած հատվածում՝ իր կողմից ինքնակամ կառուցված (նկուղ 2.6քմ և աստիճանահարթակ 7.9քմ մակերեսներով) ընդհանուր 10.5 քմ շինությունը /կառուցված 2019թ/ օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, *որոշում եմ*

1. Գավառ համայնքի Կաբելագործների փողոց 12-րդ բազմաբնակարան բնակելի շենքից հարավ ընկած հատվածում՝ Անահիտ Հենրիկի Սաղաթելյանի /ծնված 09.05.1958թ./ կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 0.00079հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված (նկուղ 2.6քմ և աստիճանահարթակ 7.9քմ մակերեսներով) ընդհանուր 2.6+7.9=10.5քմ շինությունը /կառուցված 2019թ/՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինության հատակագծերի, համարել համայնքային սեփականություն և ճանաչել օրինական:
2. Օրինական ճանաչված շինությանը տրամադրել Գավառ համայնք Կաբելագործների փողոց 12-րդ շենք թիվ 3/1 հասցեն:
3. Օրինականացված 10.5 քմ մակերեսով շինությունը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գավառ համայնքի Կբելագործների փողոց շ. 59 բն.2 հասցեի բնակիչ Անահիտ Հենրիկի Սաղաթելյանի /ծնված 09.05.1958թ./:
4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20<u>22</u>թ. <u>հոկտեմբերի 10</u>
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 779-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՆՁԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 10-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.04.2021թ. N 698-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 27.08.2021 թ-ի 1383-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման, և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի, որակավորում ունեցող անձ՝ Թաթուլ Աշոտի Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310 տրված 05.12.2013թ/ կողմից 29.08.2022թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2022AFFTH9 ծածկագիրը ու հաշվի առնելով ինքնակամ շինարարական աշխատանքներ իրականացրած անձ՝ Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի Պռոշյան փողոց 3-րդ փակուղի թիվ 3 հասցեի բնակիչ Խաչիկ Լարվենտի Հարությունյանի /ծնված 15.06.1968թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խաղտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:ումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, *որոշում եմ*

1. Հաստատել Թիվ 08062020-05-0012 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով պետական գրանցում ստացած Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի Հենրիկ Աբրահամյան փողոց 10-րդ փակուղի թիվ 2/2 հասցեում գտնվող հողամասի տեղադիրքը համաձայն կից ներկայացված հատակագծերի՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից:

2. Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի, Հենրիկ Աբրահամյան փողոց 10-րդ փակուղի թիվ 2/2 հասցեում գտնվող 2020 թվականին ինքնակամ կառուցված 80 քմ ընդհանուր արտաքին մակերեսով /70,80քմ ներքին մակերեսով/ ավտոլվացման կետի 1/մեկ/ /քառակուսի մետրի համար 2056/ երկու հազար հիսունվեց / ՀՀ դրամ սահմանված վճարով, ընդամենը 80x2056=164500 /մեկ հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները՝ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20 22 թ. հոկտեմբերի 10
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 780-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՆՁԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 10-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵԻՑ ԱՐԵՎԵԼՔ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Ջանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 29.08.2022թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2022AFFTH9 ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի Պռոշյան փողոց 3-րդ փակուղի թիվ 3 հասցեի բնակիչ Խաչիկ Լարվենտի Հարությունյանի /ծնված 15.06.1968թ./ դիմումը՝ Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի Հենրիկ Աբրահամյան փողոց 10-րդ փակուղի թիվ 2/2 հասցեից արևելք ընկած հատվածում իր կողմից ինքնակամ կառուցված 9,4 քմ. արտաքին /0,60 քմ. ներքին/ մակերեսով ավտոլվացման կետը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի Հենրիկ Աբրահամյան փողոց 10-րդ փակուղի թիվ 2/2 հասցեից արևելք գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00094 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 9,4 քմ. արտաքին /0,60 քմ. ներքին/ մակերեսով ավտոլվացման կետը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:
2. Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի Հենրիկ Աբրահամյան փողոց 10-րդ փակուղի թիվ 2/2 հասցեից արևելք գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00094 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 9,4 քմ. արտաքին /0,60 քմ. ներքին/ մակերեսով ավտոլվացման կետը ճանաչել օրինական:
3. Օրինական ճանաչված ավտոլվացման կետին տրամադրել Գավառ համայնք, Գանձակ բնակավայրի Հենրիկ Աբրահամյան փողոց 10-րդ փակուղի թիվ 2/3 հասցեն:
4. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական նշանակության հողատեսքից փոխել հասարակական գործառնական նշանակության հողատեսքի:
5. Օրինականացված 9,40 քմ. արտաքին /0,60 քմ. ներքին/ մակերեսով ավտոլվացման կետը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի Պոռշյան փողոց 3-րդ փակուղի թիվ 3 հասցեի բնակիչ Խաչիկ Լարվենտի Հարությունյանին:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 10
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 781-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԲԵԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12-ՐԴ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցների հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիրը 2022KZUSMY; մուտքագրված 14.09.2022թ ու հաշվի առնելով ինքնակամ շինարարական աշխատանքներ իրականացրած անձ՝ Անահիտ Հենրիկի Սաղաթելյանի /ծնված 09.05.1958թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և նկատի ունենալով, որ կցակառույցը գտնվում է Գավառ համայնքի Կաբելագործների փողոց 12-րդ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման համար նախատեսված հողամասում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի Կաբելագործների փողոց 12-րդ բազմաբնակարան բնակելի շենքին կից 2019 թվականին ինքնակամ կառուցված կցակառույցի՝ (1 պատուհան ձևափոխած դռան, նկուղ 6.8քմ և բաց պատշգամբ 12.4քմ մակերեսներով սեփ. վկայական N 2400189) ընդհանուր 6.8+12.4=19.2 քմ , 1 քմ մակերեսի համար՝ սահմանված վճարով, 362.7 ՀՀ դրամ, ընդամենը 19.2x362.7=7000 (յոթ հազար) ՀՀ դրամ և 1 դռանհամար 1209(մեկհազարերկուհարյուրինը) ՀՀդրամընդամենը 7000+1209=8209(ութհազարերկուհարյուրինը)ՀՀդրամ վճարով ճանաչել օրինական:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները՝ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շենք շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 10
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 782-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» ՀայաստանիՀանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» 2010թ. հունվարի 14-ի N16-Ն որոշումների պահանջներով, *որոշում եմ*

1. Գավառ համայնքի Լանջաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտվող պետական սեփականություն հանդիսացող 05-038-1213 կոնտուրից 31.22 հա, 05-038-1218 կոնտուրից 64.5 հա, 05-038-1210-0001 կադաստրային ծածկագրից 20,0000 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի արոտավայրերը տարեկան 289.300 /երկու հարյուր ութանասուն ինը հազար երեք հարյուր / ՀՀ դրամ վարձավճարով 2024 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրել Հասան Ասինի Միրզոյանին:
2. Հասան Ասինի Միրզոյանի հետ կնքել արոտավայրի վարձակալության պայմանագիր:

3. Հանձնարարել Գավառի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արծրուն Ղուրշուդյանին՝ օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 783-Ա

«ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՆԱԽԿԻՆ ՍԱՆ ԵՎԳԵՆՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԽՆԱՄՔՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁՅԱԼ ՄԱՆԿԱՏԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ և 38-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6) կետի, ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին»թիվ 631-Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» 8-րդ և 9-րդ մասերի դրույթներով, հաշվի առնելով «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի նախկին սան Եվգենյա Արսենի Մարտիրոսյանի խնամքն ու դաստիարակությունը մանկատանը կազմակերպելու մասին «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի դիմումը, *որոշում եմ*

1. Համաձայնություն տալ «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի նախկին սան Եվգենյա Արսենի Մարտիրոսյանի խնամքն ու դաստիարակությունը դարձյալ «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում կազմակերպելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 11
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 784-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, «Տեղական Ինքնակառավարման Մասին» ՀայաստանիՀանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» 2010թ. հունվարի 14-ի N16-Ն որոշումների պահանջներով

1. Գավառ համայնքի Գեղարքունիք բնակավայրի վարչական սահմաններում գտվող պետական սեփականություն հանդիսացող 05-025-0728 կադաստրային ծածկագրից 199.92399 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի արոտավայրը տարեկան 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճարով 2024 թվականը ներառյալ օգտագործման ժամկետով վարձակալությամբ տրամադրել Ջասմ Խդրի Խուդոյանին:
2. Ջասմ Խդրի Խուդոյանի հետ կնքել արոտավայրի վարձակալության պայմանագիր:
3. Հանձնարարել Գավառի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արծրուն Ղուրշուդյանին՝ օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 11
ք.Գավառ